«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
2016-2025 ԹԹ.
2016-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը բժշկական և հումանիտար կրթության միջին մասնագիտական կրթօջախ է, որի գործունեությունը նպատակաուղղված է բժշկական կրթության ազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, հասարակության մեջ իրենց դերը գիտակցող միջին մասնագիտության կրթությամբ մասնագետների պատրաստմանը:

ՌԾ-ով սահմանված ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված խնդիրների կատարումն ուղղված է քոլեջում որակյալ կրթության ապահովմանը, արդիական ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը, հանրային ծառայությունների զարգացմանը:

Քոլեջն 2016-2017, 2017-2018, 2018-2019 ուսումնական տարիների գործունեությունը կազմակերպել և իրականացրել է 2016-2025թթ. Զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակներին ու խնդիրներին համապատասխան:

Քոլեջի 2016-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 20 նպատակային գործողությունները, քոլեջի տնօրինության և ստորաբաժանումների անմիջական ուշադրության կենտրոնում է եղել: Հաշվետու ժամանակահատվածում Քոլեջի ստորա-բաժանումները դեռ չունեն գործող զարգացման ռազմավարական ծրագրից բխող իրենց զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական պլանավորումը: Ներկայումս կառուցվածքային ստորաբաժանումները և ամբիոնները առաջնորդվում են տարեկան աշխատանքային պլաններով:

Քոլեջի 2016-2025թթ. ռազմավարական գործունեության 2016-2017, 2017-2018 և 2018-2019 ուստարիների ժամանակաշրջաններն ամփոփելով՝ կարելի է նշել, որ Քոլեջը հաշվետու ժամանակահատվածների համար պլանավորված խնդիրները (ուսումնական գործընթաց) հիմնականում իրականացրել է, իհարկե կան խնդիրներ, որոնք իրականացվել են մասնակի, կամ դեռ իրականացման փուլում են՝ ներքին և արտաքին մի շարք գործոնների պատճառով:

Խնդիր 1. Վերանայել քոլեջի կառավարման կազմակերպական կառուցվածքը

Հաշվի առնելով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումները և մարտահրավերները, Քոլեջի ՌԶԾ-ի նպատակները և խնդիրները, ՈԱ պատասխանատուի կողմից 2018-2019 ուստարվա ընթացքում իրականացվել է ուսումնասիրություններ, մասնավորապես ՀՀ գործող պետական և ոչ պետական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական (քոլեջների) կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների կառուցվածքները և կառավարման համակարգը ***(Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջ, Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ, Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ, Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ)***: Ուսումնասիրության արդյունքները զեկուցվել են Քոլեջի տնօրինական խորհրդում ***(Հիմք՝ ՈԱ պատասխանատուի զեկուցագիր)***:

Որակի ապահովման պատասխանատուն՝ որպես կանոնակարգող մարմին, հանձնարարություն է ստացել ձևավորել աշխատանքային խումբ և կազմակերպել Քոլեջում գործող փաստաթղթերի մշտադիտարկում, անհրաժեշտությունից ելնելով մշակել նոր, փաստաթղթեր:

2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակում տնօրենի հրամանով ստեղծվեց Քոլեջի իրավանորմատիվային փաստաթղթերի վերանայման աշխատանքային խումբ ***(հիմք, հրաման № ԿԳ-06 21.03.2019թ.):***

Աշխատանքային խմբի կողմից վերանայվել են.

1. «Միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրիանական խորհրդի» կանոնակարգ
2. «Միջին մասնագիտական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի» կանոնակարգ
3. «Ներքին կարգապահական կնոնները»
4. «Միջին մասնագիտական ուսումնական հաստատության ամբիոնի գործունեության» կանոնակարգ
5. «Ուսանողի գիտելիքների ստուգման գնահատման և բողոքարկման» Կարգ
6. «Միջին մասնագիտական ուսումնական հաստատության առարկայական պարտքերի մարման» Կարգ:
7. «Պրակտիկայի կազմակերպման» կանոնակարգ

Աշխատանքային խմբի կողմից մշակվել են ներքոնշյալ փաստաթղթերի նախագծերը.

1. Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ
2. Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժնի կանոնադրություն
3. Ուսանողի ուղեցույց

4. Ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի ապահովման քաղաքականություն
5. «Գրիգորիս» բժշկա - հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ն մասնակիցների Ընդհանուր ժողովի ձևավորման և գործունեության կարգ
6. Ռիսկերի բացահայտման և կառավարման ընթացակարգ
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատության Ուսումնամեթոդական խորհրդի Կանոնակարգ
8. Որակի ներքին ապահովման քաղաքականություն
9. Դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման Կանոնակարգ
10. Ստորաբաժանումների գործունեության պլանավորման նոր ձևաչափ
11. Կատարողականի (հաշվետվության) նոր ձևաչափ
12. Պաշտոնի անձնագիր
13. Բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգ
14. Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն
15. Ակադեմիական ազնվության կարգ

Քոլեջի զարգացման և ընդլայնման միտումը հաշվի առնելով՝ ստեղծվեց Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժինը, մշակվեց նրա կանոնադրությունը: Քոլեջի ՌԶԾ-ով, որպես հեռանկարային նպատակ նախատեսվում է սեփական շենքի կառուցում կամ գնում, որի արդյունքում բոլոր ստորաբաժանումները կունենան իրենց առանձին աշխատասենյակները:

Ուսումնական մասի հետ կապված փոփոխությունը հիմնականում կապված էր նրա կողմից իրականացվող գործառույթների ընդլայնման հետ: Քոլեջը չունենալով կարիերայի առանձին բաժին՝ այդ բաժնի պարտականությունների կատարումը կստանձնի պրակտիկայի և կարիերայի պատասխանատուն ուսումնական մասի հետ միասին: Ուսումնական մասի կանոնադրությունը լրամշակելիս կարևորվել են ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման և անցկացման խնդիրները:

Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ստեղվել է Արտաքին կապերի բաժինը՝ որպես առանձին ստորաբաժանում, հետևաբար մշակվել է նաև բաժնի կանոնադրությունը իր խնդիրներով ու գործառույթներով: Արտաքին կապերի բաժնի ստեղծումը ևս կապված էր կազմակերպական կառուցվածքի փոփոխության, ստորաբաժանումների համագործակցության, ինչպես նաև Քոլեջի տեսլականի՝ միջազգային գիտակրթական տարածք ինտեգրվելու գործընթացի արդյունավետ կազմակերպման և իրականացման հետ:

Վերանայված բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի փաթեթները ներկայացվել են Քոլեջի տնօրենին ***(Հիմք՝ Նոր փաստաթղթերի ցանկ)*** և հաստատվելուց անմիջապես հետո այն հասանելի կլինի բոլոր ներքին շահակիցներին:

Քոլեջի Տնօրենին առաջարկվել է նայև միջոցներ ձեռնարկել «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի պաշտոնական վեբ կայքի վերաշահագործման ուղղությամբ:

Խնդիր 2. Մշակել Քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրման ընթացակագեր:

Այս խնդրի հետ կապված աշխատանքները դեռ ընթացքի մեջ են: Հաշվետու ժամանակահատվածի համար մշակվել է Քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրման ուղեցույցի նախագիծը ***(Հիմք՝ Ուղեցույցի նախագիծ):***

Ուսումնասիրության ընթացքում հստակեցվել են կոնկրետ քայլերը Քոլեջի հետագա գործունեության հետ կապված, մասնավորապես մշակվել է «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ամողջվին նոր 2019-2024 թթ. ՌԶԾ-ի նախագիծը, որտեղ ներառված նպատակները և խնդիրները ունեն հստակ և իրատեսական գործողություններ և վերջնարդյունքներ ***(Հիմք՝ Նոր ՌԶԾ-ի նախագիծ):***

Խնդիր 3. Հստակեցնել Քոլեջի ֆինանսական ռեսուրսների ապահովման մեխանիզմները:

Հաշվի առնելով Քոլեջի կազմակերպաիրավական կարգավիճակը (ՍՊԸ) իր գործունեության աշխատանքներում Քոլեջի տնօրենը հաշվետու է միայն Քոլեջի հիմնադրին: Նմանատիպ ուսումնական հաստատությունների գործունեության ուսումնասիրության արդյուքնները, արտաքին մարատիրավերները, Հայաստանյան շուկայում մրցունակության պահպանումը և բարձրացումը քոլեջի հիմնադիրը հանձնարարել է հաշվապահին և ՈԱ պատասխանատուին մշակել Քոլեջի ֆինանսների տնօրինման քաղաքականություն, տարեկան նախահաշիվ:

Յուրաքանչյուր տարվա վերջում Քոլեջի ղեկավարությունը իրականացրել է աշխատանքներ հաջորդ ուսումնական տարվա պոտենցիալ դիմորդների հոսքի ապահովման ուղղությամբ: Մասնավորապես՝ կազմակերպվել են հանդիպումներ դպրցներում աշակերտների և նրանց ծնողների հետ, տպագրվել են տեղեկատվական բուկլետներ, տեղադրվել են հայտարարություններ և այլն:

Բյուջեի տարեկան պլանավորումը իրականացվում է առնվազն պոտենցիալ դիմորդների թվաքանակով: *Բյուջեն պլանավորելիս հաշվի է առնվել առաջիկա տարիների ընդունելության մոտավոր դինամիկան:*

Խնդիր 4. Մշակել մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱ պատասխանատուի և Կադրերի բաժնի վարիչի կողմից մշակվել է Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության նախագիծը ***(Հիմք՝ ՄՌԿ քաղաքականության նախագիծ),*** որը նախատեսվում է կիրարկել 2019-2020 ուսումնական տարվանից: Քանի որ նոր կառուցվածքով միավման արդյունքում ստեղծվում է Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժնին, ապա բաժնի

վարիչին հանձնարարվել է վերանայել և հստակեցնել աշխատակիցների գործառույթներն ու պարտականությունները:

Խնդիր 5. Վերանայել ամփոփիչ ատեստավորման քննությունների կարգերը:

Հաշվետու ժամանակահատվածը իր մեջ ընդգրկում է 3 ամփոփիչ ատեստավորում: Համաձայն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվությունների տարիների ընթացքում աստիճանական բարելավում է նկատվել, մասնավորապես՝ «Դեղագործական» և «Ատամնատեխիկական գործ» մասնագիտությունների քննական տոմսերում, որտեղ ավելացել են գործնական հմտությունների և ցուցադրման հարցերը, գնահատման համակարգը միասնական է՝ 20 բալային համակարգով: Այնուամենայնիվ, քանի որ ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգը հաստատված է ՀՀ ԿԳ նախարարության կողմից, անհրաժեշտություն է առաջացել վերանայել և լրամշակել ամփոփիչ ատեստավորման կազմակերպման ներքոլեջային ընթացակարգերը:

Խնդիր 6. Մշակել ուսանողների պրակտիկայի կազմակերպման կարգ:

Գործող կարգերի վերանայման գործընթացները կիրականացվի 2019-2020 ուսումնական տարվա ընթացքում:

Խնդիր 7. Բարելավել դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմները:

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ կազմակերպվել է 15 դասալսում, արդյունքները քննարկվել են ամբիններում և ապա Մանկավարժական խորհրդում: Քոլեջում կոնկրետ դասալսումների և քննարկումների գործող ընթացակարգեր չի գործում, սակայն ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել մշակել և գործարկել դասալսումների և քննարկումների կանոնակարգ:

Խնդիր 8. Մշակել դասախոսների խրախուսման մեխանիզմներ:

Այս խնդրիր հետ կապված աշխատանքները դեռ ընթացքի մեջ են, քանի որ այն անմիջական կապված է Քոլեջի ֆինանսական միջոցներից: Այնուամենայնիվ Քոլեջի ղեկավարությունը դասախոսական կազմի աշխատանքի մոտիվացիայի բարձրացման ուղղությամբ իրականացրել է մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ որոշ դասախոսներ մասնակցել են վճարովի տարբեր մասնագիտական միջոցառումների, կազմակերպվել են տոնական տարատեակ միջոցառումներ և էքսկուրսիաներ:

Քոլեջի դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմների կիրառման առումով նախատեսվում է 2019-2020 ուստարվանից մշակել և հաստատել համապատասխան կանոնակարգ:

Խնդիր 9. Ընդլայնել համագործակցությունը տեղական և արտասահմանյան բժշկական քոլեջների և կազմակերպությունների հետ, կնքել համապատասխան պայմանագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում Քոլեջն ունի կնքաց և գործող 9 համագործակցության պայմանագրեր, որի շրջանակներում կազմակերպվել են մի շարք

միջոցառումներ, մասնավորապես՝ պրակտիկաները ամբողջովին կազմակերպվում են մասնագիտական առաջատար կազմակերպություններում, լավագույն շրջնավարտներին՝ հատկապես դեղագործ մասնագետներին ապահովում են աշխատանքով ***<u>Հիմք՝ Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկանք)</u>***:

Մոտ ապագայում նախատեսվում է ստեղծել արտաքին կապերի բաժին, որն էլ աշխատանքներ կտանի ընդլայնելու և ամրապնդելու համագործակցության շրջանակները:

Խնդիր 10. Բարելավել քոլեջի գրադարանային ֆոնդը՝ հարկացնելով ֆինանսական միջոցներ

Հաշվետու ժամանակահատվածում Քոլեջի գրադարանում առկա է՝ 200 անուն գիրք, ամսագիր՝ 50: Շենքային պայմաններով պայմանավորված 2015 թվականից քոլեջը կնքված պայմանագրի շրջանակներում համագործակցում է Ազգային գրադարանի հետ: Ուսանողները ցանկացած գրականություն (տպագիր, էլեկտրոնային) կարող են ուսումնասիել հենց Ազգային գրադարանի ընթերցասրահում:

Խնդիր 11. Մշակել ՈԱ ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտ ընթացակարգեր, դրանց գնահատման և արդյունավետության չափման մեխանիզմներ՝ բարելավելով ՈՆԱ համակարգը և մեխանիզմները:

Քոլեջում դեռ նոր է ձևավորվում որակի ներքին ապահովման մշակույթը: Քոլեջի կառուցվածքային և շենքային հնարավորություններից ելնելով առկա է միայն որակի ապահովման պատասխանատուի հաստիքը: Որպես առանձին ստորաբաժանում պլանավորվում է ստեղծել 2023 թվականից: Ունենալով հեռանկարներ, մասնավորապես՝ սեփական շենքի ձեռքբերումը և արտասահմանցի ուսանողների (օտար լեզվով կրթական ծրագիր իրականացնելը) ընդունելությունը: Հաշվետու ժամանակահատվածում Քոլեջի երկու աշխատակից մասնակցել են ՈԱԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպված վերապատրաստումներին և ՀՖԿՍՊԻ-ի կողմից կազմակերպված մջազգային աշխտաժողովն: Այսօր հենց իրենք էլ զբաղվում են Քոլեջում ՈԱ գործընթացներով: Իրենց կողմից մշակվել է որակի ներքին ապահովման ձեռնարկի և որակի ներքին ապահովման քաղաքականություն նախագծերը:

Որակի ներքին ապահովման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով աշխատանքներ են տարվում ընդլայնելու համագործակցությունը հանրապետական այլ կառույցների հետ:

Հաշվի առնելով քոլեջի կառուցվածքային առանձնահատկությունները, ՈԱ գործընթացները թափանցիկ և հրապարակային է, քանզի ցանկացած հարց կամ խնդիր լուծվում է քննարկումների միջոցով: ՈԱ պատասխանատուի կողմից 2019-2020 ուստարվա ընթացքում պլնավորվում է կազմակերպել սեմինարներ ՈԱ գործընթացների վերաբերյալ, հրավիրելով տեղական փորձառու մասնագտների:

Խնդիր 12. Պարբերաբար վերհանել ուսանողների և դասախոսների կարիքները տրամադրվող ռեսուրսներից:

Քոլեջում չի գործել ուսանողների և դասախոսների կարիքների վերհանման հստակ մեխանիզմներ: Ցանկացած խնդիր առաջանալու դեպքում դասախոսը կամ ուսանողը անձամբ է մոտենում ամբիոնի վարիչին, կամ տնօրենին բարձրացնում և հիմնավորում է խնդիրը կամ խնդիրները: Որից հետո տնօրենը միջոցներ է ձեռնարկում տվյալ խնդիրը լուծելու համար: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է նաև վերոնշյալ հարցը, որի արդյուքնում մշակվել է ուսանողների և դասախոսների կարիքները տրամադրվող ռեսուրսներից գնահատման համապատասխան հարցաթերթիկների նախագծերը, որոնք քննարկվել են ամբիոններում և ուսանողական խորհրդում:

Նախատեսվում է 2019-2020 ուստարվանից պարբերաբար կազմակերպել հարցումներ և ստացված արդյունքների վերլուծության հիման վրա մշակել բարելավման պլան:

Խնդիր 13. Իրականացնել նյութատեխնիկական բազայի արդիականացման գործընթացներ:

Ընդհանուր առմամբ 2016-2019 թվականները Քոլեջոը նյութատեխնիկական բազայի արդիականացման աշխատանքների ուղղությամբ բյուջեից հատկացվել է 1 մլն. դրամ: Սուղ ֆինանսական միջոցներով պայմանավորված աշխատանքները կատարվում են աստիճանաբար:

Խնդիր 14. Իրականացնել լսարանների, մասնագիտացված կաբինետների լաբորատորիաների վերանորոգման ու կահավորման գործընթաց:

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր մոտ 3 մլն. դրամի վերանորոգման աշխատանքներ և 500.000 դրամի ձեռք է բերել անհրաժեշտ կահույք:

Խնդիր 15. Լսարանները, կաբինետները և լաբորատորիաները համալրել տեխնիկական սարքավորումներով, դիդակտիկ նյութերով և ուսումնական գործընթացը խթանող այլ միջոցներով:

Քոլեջի ղեկավարության կողմից վերոնշյալ խնդիրը եղել, կա և մնում է առաջնայիններից մեկը և քանի որ համաձայն գործող ՌՀԾ-ի վերջնաժամկետ է սահմանված 2026 թվականը, ապա խնդիրներ՝ 13,14 և 15-ը դեռ իրականացվում են:

Խնդիր 16. Համակարգել ուսանողների հավաքագրման գործընթացները՝ ստեղծել քոլեջի պաշտոնական վեբ կայք:

Ուսանոնղերի հավաքագրումը իրականացվում է ինչպես հանդիպումների, բաց դռների կազմակերպմամբ, այնպես էլ սոցիալական ցաների միջոցով՝ էլեկտրոնային նամակագրությամբ, ֆեյսբուքյան էջով և այլն: Ինչ վերաբերվում քոլեջի պաշտոնական վեբ կայք ստեղծելուն, ապա այդ գործընթացը ընթացքի մեջ է և գտնվում է քոլեջի Հիմնադրի անմիջական ուշադրության կենտրոնում:

Խնդիր 17. Համակարգել ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունները՝ մշակել համապատասխան ընթացակարգեր:

Քոլեջում վաղուց ձևավորված է և գործում է խորհրդատուների ինստիտուտը: Ինչպես մասնագիտական, այնպես էլ հումանիտար ամբիոններում գործում է մասնագիտական խորհրդատվության ծառայությունը: Սակայն այն կոնկրետ ընթացակարգ չունի, որն էլ համարում ենք բաց կողմ: Այս բացը նախատեսվում է լրացնել 2019-2020 ուսումնական տարվանից, կմշակվի անհրաժեշտ գործիքները և կդրվի շրջանառության մեջ: Բոլոր ընթացակարգերը նախապես կտեղեկացվեն ուսանոնղներին: Պլանավորվում է բոլոր ամբիոններում նշանակել ըստ մասնագիտությունների խորհրդատուներ, որոնք տիրապետում են ուսումնական գործընթացին ու կարող են անհրաժեշտության դեպքում ուսումնառողներին տալ սպառիչ պատասխան և անհրաժեշտ խորհրդատվություն: Քոլեջում ուսանողների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով 2019-2020 ուստարվանից կգործի ուսանողի ուղեցույց:

Խնդիր 18. ՈՒԽ աշխատանքների ակտիվացում, ուսանողների կողմից միջոցառումների կազմակերպման նախաձեռնությունների խրախուսում:

Քոլեջի ուսանոնղական խորհուրդը ակտիվ մասնակցել և մասնակցում է քոլեջի առօրյա գործունեությանը: Ուսանողական խորհուրդը ունի իր կանոնադրությունը, սակայն միջոցառումների տարեկան պլանները որպես այդպիսին առկա չեն: Ուսանողների կողմից կազմակերպված տարատեսակ միջոցառումները ցավոք չեն արձանագրվել: Քոլեջի տնօրինության նախաձեռնությամբ 2019-2020 ուստարվնից կմշակվի Ուսանողական խորհրդի գործունեության նոր ընթցակարգեր՝ տարեկան պլան, նիստերի արձանագրություններ, հշվետվություններ և այլն: Այնուհանդերձ Քոլեջի տնօրինությունը աջակցել է ուսանողական խորհրդին բոլոր գաղափարների իրականացման համար:

Խնդիր 19. Ապահովել ուսանողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը քոլեջի կառավարմանը:

Ուսանողները որպես քոլեջի ներքին շահակից մինչ այժ չեն մասնակցել քոլեջի կառավարման գործընթացներում: Սակայն բարեփոխումերով պայմանավորված 2018-2019 ուստարվանից ուսանողները ներգրավված են քոլեջի կառավարման և խորհրդակցական մարմիններում ***(Հիմք՝ ընդհանուր ժողովի և խորհուրդների կազմի հրաման):***

Խնդիր 20. Ապահովել ՈԱ գործընթացներում ընդգրկված անձնակազմի պարբերական վերապատրաստման դասընթացների իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱ պատասխանատուները վերապատրաստվել են միայն ՈԱԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպված վերապատրաստման ծրագրին: Քոլեջի տնօրենի կողմից միջոցներ են ձեռնարկվում վերապատրաստումները դարձնել շարունակական, ինչպես օրինակ հրավիրել փորձագետներ կազմակերպելու սեմինարներ, կարճաժամկետ վերապատրաստումներ, ինչպես նաև խորհրդատվություններ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով գործող 2016-2025 թվականների Ռազմավարական զարգացման ծրագրի 3 տարվա կատարողականը, գալիս ենք այն եզրահանգման, որ անհրաժեշտություն է առաջացել անհապաղ իրականացնել միջոցառումների համալիր, ինչպիսիք են՝

1. **Ամբողջովին վերանայել գործող ՌԶԾ-ը (կառուցվածքը, քոլեջի առաքելությունը, վերաձևակերպել նպատակները և առաջադված խնդիրները, համապատասխան գործողություններով, իրենց իրատեսական վերջնարդյունքներով, մշակել և հաստատել ըստ ՌԶԾ-ի նպատակների գնահատման արդյունարար ցուցիչները «ԳԱՑ»):**
2. **ՈԱ պատասխանատուի կողմից ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ զեկուցի հիման վրա անհրաժեշտ է վերանայել «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կառավարման գծային կառուցվածքը:**
3. **Մշակել և հաստատել Քոլեջի ստորաբաժանումների գործունեության պլանավորման և կատարողականի նոր ձևաչափ, որն իր մեջ կներառի կարճաժամկետ, միջնաժամկետ և հեռանկարային ռազմավարական նպատակներ և գործողություններ:**
4. **ՈԱ պատասխանատուին և գլխավոր հաշվապահին հանձնարարել սեղմ ժամկետներում մշակել Քոլեջի ֆինանսների տնօրինման քաղաքականություն, տարեկան նախահաշիվ՝ ըստ նոր ՌԶԾ-ի առաջնային նպատակների:**
5. **Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին հանձնարարել սեղմ ժամկետներում մշակել և տնօրենի հաստատմանը ներկայացնել դասալսումների և քննարկումների համապատասխան ընթացակարգ, վերանայել և արդիականացնել պրակտիկաների կազմակերպման և գնահատման ընթացակարգերը:**
6. **Համաձայն Քոլեջի հեռանկարային նպատակների, այն է աշխատանքներ տանել առնվազն մեկ ՄԿԾ-ի համար ստանալ օտար լեզվով կրթություն կազմակերպելու թույտվություն, ստեղծել արտաքին կապերի բաժին:**
7. **Կազմակերպել առկա ռեսուրսների գնահատում և մշակել բարելավման պլան-ժամանակացույց:**
8. **Անհարժեշտությունից ելնելով վերանայել Ընդհանուր ժողովի ձևավորման և գործունեության կարգը:**
9. **Վերանայել Քոլեջում առկա բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերը:**

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար

քոլեջի ՈԱ պատասխանատու՝ _____ Լ.Հարությունյան